

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Բաճաթիւ. գիտ. դոկտոր ԱԼ. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

20. ԳԼՈՒԽԿՈՆԾԻՆԻՍՏԻԿԱՆ

Գլուխկոնծի||գլուխկոնծի (աջիւսի վրայով թափալվելով ոստյուն) բառը առաջին ձևով առաջին անգամ տեղ է գտել Հր. Աճառյանի «Հայերեն դավա-
ռական բառարանում», ուր և նրա գործածութեան աղբյուր են գիտված սոսկ
Երևանի (Արարատյան) և Ղարաբաղի բարբառները¹: Բարբառային այդ բառը,
որ գերազանցապես գործածվում է տալ, երբեմն նաև զալ, ասել բայերի հետ
իբրև հարադրական բարդութեան հարադիր, բարդ բառ է՝ կազմված երկու
գլուխ և կոնծի||կոնծի բաղադրիչներից: Դրանցից առաջինը՝ գլուխ բառը, որ-
քան պարզ է ու որոշ, այնքան երկրորդը՝ կոնծի||կոնծի-ն, անստույգ է, և
հայտնի չէ, թե ի՞նչ ծագում ունի և ի՞նչ է նշանակում: Հարկ է նշել, որ գրա-
վոր աղբյուրներում գլուխկոնծի||գլուխկոնծի բառը հանդիպում է նաև գլխկոն-
ծի||գլխկոնծի (հմմտ. «Հետո գլխկոնծի արեց ու կանգնեց փոքր հորեղբորս
կողքին», Հր. Մաթևոսյան, Օգոստոս, էջ 259. «Ապա իրար ետևից գլխկոնծի
եկան ասորի Բաղալը, Բաղլվա Սիսակը և Ալեքնա Ագոն», Խ. Դաշտենց, Խո-
ղեղան, էջ 108. «Նա մերթ փաթաթվում էր Մանուշի ոտքերին, նրա առաջ
գլխկոնծի տալիս, Ս. Խանզադյան, Հողը, 1-ին գիրք, էջ 307), այլև գլխկոնծի
(հմմտ. «Իրար հետևից վրա տվին մոլտալով, գլխկոնծի տալով՝ մաքրա-
զարդեցին այն», Մ. Մանվելյան, Երկեր, էջ 128. «Քույրերն այնքան էին ուրա-
խանում, որ սկսում են անկողնու վրա գլխկոնծի տալ», Աղավնի, Շի-
րակ) ձևերով և բարբառից գրական լեզվին անցնելով՝ այդտեղ ձևը է բերել
գրական բառի լիակատար իրավունք: Ի դեպ, բանաստեղծ Պ. Սևակը գլուխ-
կոնծի բառից կազմել է մինչև իսկ կրկնավոր բարդություն. [Մաղրածուն] չ
գլուխկոնծի-գլուխկոնծի գծուկի պես թափալվում է²:

Արդ՝ փորձենք պարզել, թե ինչ ծագում ունի գլուխկոնծի||գլուխ-
կոնծի (գլխկոնծի||գլխկոնծի) բառի այդ երկրորդ՝ կոնծի||կոնծի բա-
ղադրիչը: Բարդութեան մեջ, որ ամենևին դժվար չէ նկատել, դա ար-
տահայտում է գլուխը շուտ բերելու, գլուխը վայելու նշանակությունը, որն
իսկ և իսկ համընկնում է ԿՈՐԾ (ազլիսվայր շրջվիլ, տապալվիլ) արմատի
նշանակությանը³: Հմմտ. նաև բայական ձևերի նշանակությունները. «Երև.

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 3 (էջ 210—220), 1973, № 4 (էջ 127—136), 1975, № 2 (էջ 183—191):

¹ Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 242:

² Օրինակը բերվում է Հայկական ՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրա-
տարակած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանից» (հատ. 1, Երևան, 1969,
էջ 419):

³ Այդ մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, Երե-
վան, 1973, էջ 649:

կօրծել, կօրծ անլլ «մյուս կողմը շրջել (ամանը)», կօրծ լինել «շրջվիլ, տապալվիլ», Սլմ. կործել, վն. կոռծել, Ալշ. Մշ. կոռծել, Պլ. Սեբ. qorāšēl, հրբ. qorāšēl, Ուլմ. կուրծիլ, Մկ. կուռծիլ «ամանը զխիվայր շրջել», Չն. qorāšēl «ցած գլորվիլ, տապալվիլ», Չրս. qorāšēl «տնկած՝ կանգնեցրած մի բան զխիվայր շրջվիլ, ցած տապալվիլ...»⁴:

Գլուխկոնծի (զխկոնծի) ըզլուխկոնծի (զխկոնծի) բարդություն կոնծի ըզլուխկոնծի բաղադրիչի և հիշյալ կործ արմատի իմաստների ընդհանրությունը անհերքելիորեն ապացուցվում է նաև զխիկործ բառի առկայությամբ, որը հենց արտահայտում է. «1. Գլուխը քաշ ձգած՝ կախած: 2. Ամանը զխիվայր դրած, բերանը ներքև, ուրը վեր» նշանակությունները⁵: Նույն այդ բառն էլ, պետք է ասել, հոլովական ձևով գործածվելով իբրև հարադրավոր բայի հարադիր (*զխիկործի տալ, *զխիկործի գալ), համապատասխան բարբառներում հնչյունական փոփոխության է ենթարկվել և առաջ բերել զլուխկոնծի (զխկոնծի) ըզլուխկոնծի (զխկոնծի) ձևերը: Այս դեպքում, հասկանալի է, մենք է պարզել նախնական *կործի բառի կրած Ռ > Ն հնչյունափոխության հնարավորությունն ու իսկությունը:

Հայերենի շատ բարբառներում նման հնչյունափոխությունը՝ Ռ՝ ձայնորդի փոխարինումը Ն ձայնորդով, ամենեին բացառված կամ խորթ երևույթ չէ. հմմտ. օրինակ, բարձր > վն. պա՛նցրբ, Սլմ. Մկ. պա՛նցրբ, Մրդ. պա՛նցի՛ր, Տիգ. փանցրբ, Ջթ. բո՛նձ՛րբ, բ՛ոնձ՛ոլ⁶, երև. պանցրբ, բանցրբ⁷, Գոր., Ղրբ. ընդ իրեար գալ > առբոռ ի՛ալ > առբոռ ի՛ալ⁸ և այլն: Պետք է ասել, որ նման հնչյունափոխական օրենքով զլուխկոնծի (զխկոնծի) ըզլուխկոնծի (զխկոնծի) բառի նախավոր ձևում տեղի է ունեցել Ռ > Ն մասնավոր հնչյունափոխությունը, որը, ի դեպ, հաստատվում է նաև նրանով, որ դրանից հետո Ն ձայնորդին հաջորդելու պատճառով Մ-ն ձայնեղացել է, և ոչ պատահականորեն այսօր գործածական են ինչպես զլուխկոնծի ըզլուխկոնծի, այնպես էլ զլուխկոնծի ըզլուխկոնծի ձևերը: Այսպիսով, պարզ է դառնում, որ զլուխկոնծի (զխկոնծի) ըզլուխկոնծի (զխկոնծի) բարդ բառի կոնծի (<կոնծ+ի) ըզլուխկոնծի (<կոնծ+ի) բաղադրիչը սերում է կործ արմատից, որը, ինչպես և զլուխ բառը, հայերենի տակավին չստուգաբանված արմատներից է⁹:

21. ԹԱՐԱՆԵԼ

Հր. Աճառյանը «Հայերեն արմատական բառարանում» քարսել (=թնրսել) բառը «Ընտրել կրկին կամ ղատ» աշակերտ ունի բառ. Երեմ. էջ 116. Նույն է Ղրբ. քարսել «հատեղենները ափսեի մեջ դրած վեր վեր նետելով ու փչելով մաքրել», տեղեկանքով ներկայացրել է իբրև չստուգաբանված արմատ, ասելով միաժամանակ. «= Թվի քե քրբ. tars «հակառակ, ներհակ» բա-

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 650:

⁵ Տե՛ս այդ մասին Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. I, Երևան, 1944, էջ 445:

⁶ Այդ մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, Երևան, 1971, էջ 427:

⁷ Տե՛ս Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, Արարատյան բարբառի խոսվածքները Հոկտեմբերյանի շրջանում, Երևան, 1973, էջ 310:

⁸ Տե՛ս մեր «Գործիսի բարբառը», Երևան, 1975, էջ 108:

⁹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, էջ 565, հատ. Բ, էջ 649:

ոից է բայացյալ (ընդգծումը մերն է—Ա. Մ.)¹⁰։ նույն միտքը նա հայտնել է նաև «Հայերեն գավառական բառարանում»։ «*Թարսել Ղրբ. ընդեղենները հընդրելու, մաքրելու համար ափսի մը մեջ դրած վեր վեր նետելը, որով տակի հատերը վրան կելլեն. թարսողը կփչե և ասով պարապ հատիկները, կճեպները ևն դուրս կթռին» = Թվի բե բրբ. تارس ters (արև. բրբ. tars) «ներհակ, հակառակ» բառն բայացյալ է (ընդգծումը մերն է—Ա. Մ.)¹¹։

Թարսել բառը շատ ավելի որոշ ու ճշտորեն է բացատրել Ստ. Մալխասյանցը. «ԹԱՐՍԵԼ, եցի, նբ. Թարս կողմը շուռ տալ, տակը վրա անել (ընդգծումը մերն է—Ա. Մ.)։ Ընդեղենը տեփուրով թեթև վեր նետել, այնպես որ տակի ընդեղենը երես ելնե, և այս գործողության ժամանակ թեթև փչելով՝ թեթև մասնիկները (կճեպ, դարդակ հատիկները, փոշի ևն) հեռացնել. տեփրել, ծվել։ 2. չբ. տ. Թարսվել»¹²։ Իր այս բացատրությամբ, ինչպես դժվար չէ նկատել, Ստ. Մալխասյանցը Թարսել-ը առանց վարանելու համարել է թուրք. Թարս (=թարս) «ներհակ, հակառակ» բառից կազմված բառ, մերժելով այսպիսով Հր. Աճառյանի կարծիքի թվացականությունը և, բնականաբար, Թարսել-ի Թարս բառից բացացած լինելը դիտելով իբրև բացահայտ ճշմարտություն։ Եվ որ իրոք դա այդպես է, հաստատվում է նաև Գորիսի բարբառում Թարսել բառի գործածությամբ¹³, որտեղ այն ճիշտ և նույնպես ցույց է տալիս «ընդեղենը տեփուրով մաքրելու», «ընդեղենը վեր նետելով դեպի թարս՝ հակառակ կողմը շուռ տալու, տակը վրա անելու» գործողություն։ Միանգամայն հասկանալի է, որ Հր. Աճառյանը հենվելով մի կողմից Երեմիա Մեղրեցու բառարանի «ընտրել կրկին կամ զատ» անորոշ ու տարածմ¹⁴, մյուս կողմից իր իսկ տված ոչ այնքան հաջող բացատրության վրա՝ հանդես է բերել ծալահեղ զգուշավորություն, թվացական համարելով Թարսել (=բրբ. թարսել) բայի Թարս (=բրբ. թարս) բառից բացացյալ լինելը։ Եվ այսպիսով, քանի որ Թարսել (=թարսել) բայի Թարս (=թարս) բառից ծագած լինելն այլևս ոչ մի կասկած չի հարուցում, առաջ մնում է այն դասել հայերենի ստուգաբանված արմատների շարքը և ընդունել, որ տակավին չստուգաբանված 3680 արմատներից մեկը նվազում, և համապատասխանաբար մեկով ավելանում է թուրք-թաթարական փոխառյալ արմատների թիվը (170+1=171)։

22. ՍԵՆ (<ՍԷՆ)

ՍԵՆ (<ՍԷՆ) բառը գործածվում է Գորիսի բարբառում՝ սովորաբար ծծկեր երեխայի մոր, այլև սուրբ կենդանիների կրծքի կաթի «անուժ, փուշ, դատարկ» լինելը նշելու համար։ Օրինակ՝ Կաթնը սէն ա, ըտրա հէտի ալ խուխէն ծըծան յէտ ա ըրալ [—Կաթը անուժ (=դատարկ, փուշ) է, դրա համար

¹⁰ Հո. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, էջ 162։

¹¹ Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 352։

¹² Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. II, Երևան, 1944, էջ 87—88։

¹³ Այդ մասին տե՛ս մեր «Գորիսի բարբառը», էջ 515։

¹⁴ Երեմիա Մեղրեցու բառարանի այլ ձևադրերում Թարսել բայը ներկայացված է ավելի հաջող՝ «Ընտրել կրկին, կամ զատել», «կրկնազատել», «ընտրել, կամ որոշել» բացատրություններով (այդ մասին տե՛ս «Բառգիրք հայոց», Երևան, 1975, էջ 117 և 371)։

էլ երեխային ծծից զրկել է], էտ կօվը պըհէլի կօվ չի, կաթնը սէն ա [—Այդ կովը պահելու կով չէ, կաթը անուժ (գատարկ, փուշ) է] և այլն:

Արդ՝ ի՞նչ ծագում կարող է ունենալ Գորիսի բարբառին հատուկ այդ բառը, որ ցարդ ոչ մի բառարանում կամ զրավոր աղբյուրում չի արձանագրվել¹⁵:

Նկատի ունենալով թե՛ արտաքին հնչյունական կառուցվածքը և թե՛ արտահայտած նշանակությունը, պետք է ասել, որ այն պարզապես գրաբարյան սին «ունայն, պարապ, թափուր, մեջը փուշ»¹⁶ բառի բարբառային արտահայտությունն է. ի>է հնչյունափոխության համար հմմտ. ծին>ծնն, հինգ>հէնգ, նինջ>նէնջ, պինդ>պէնդ, այլև՝ խիճ>խէն, ծիղ>ծէղ, կիր>կէր, միս>մէս և այլն¹⁷:

Հնդեվրոպական հիմք լեզվի k'eno ձևից սին բառի ծագումը նշելով, Հր. Աճառյանը առանձնապես շեշտում է, որ «Հայերենից և հունարենից դուրս այս արմատը ուրիշ որևէ լեզվի մեջ չի պահված»¹⁸: Հետաքրքրական է, որ այն չի պահված հայերենի նաև ոչ մի բարբառում և հետևաբար՝ նշարկելով միայն Գորիսի բարբառում, ինչպես պատմա-համեմատական լեզվաբանության, այնպես էլ հայոց լեզվի պատմության ու հայ բարբառագիտության համար, անշուշտ, որոշակի արժեք է ներկայացնում:

23. ՏԱՆԿ||ՏԱՆԿ

Տանկ||տանգ բառը գործածական է Արարատյան (Երևանի), Ղարաբաղի (Արցախի), այլև Գորիսի, Մեղրու, Կարճևանի բարբառներում և նշանակում է «պարկի (չուվալի) բերանը շինված չվանե կանթ, ունկ»¹⁹, «Քրձի (ջվալ) կողմերի երկու օղակները, որոնցից բռնելով ջվալը վեր են բարձրացնում»²⁰, «Տոպրակի վերի երկու անկյունում օղակներ կամ ականջներ, որոնցից բռնում են՝ տոպրակը բարձրացնելու համար. կանթ, ունկ»²¹ և այլն:

Հայերենի ոչ շատ բարբառներում գործածվող այդ տանկ||տանգ բառը, ինչպես վերոբերյալ բացատրություններն են վկայում, կանթ, ունկ բառերի հոմանիշն է և իմաստաբանորեն զրանցից թերևս տարբերվում է նրանով, որ ոչ թե նաև անոթների, մետաղյա կամ կավե ամանների, այլև բացառապես ջվալի (տոպրակի) կողերի երկու օղակների՝ բռնատեղերի նշանակության համար է գործածվում: Պետք է, սակայն, ասել, որ տակավին չստուգաբանված տանկ||տանգ բառը իմաստաբանական ու ֆունկցիոնալ ավելի որոշակի ընդհանրություն է երևան հանում հատկապես կանթ բառի նկատմամբ, որը ազատորեն ու ոչ պատահականորեն կարող է և փոխարինել նրան. օրինակ. «Հին ջվալին նոր կանթ պիտի— ԱՌԱԾ. էմ. Ազդ. ժող. Ձ. 208»²²: Նշենք

¹⁵ Այդ հայտնի դառնալու պատճառով սին բառը տեղ չի գտել նաև մեր «Գորիսի բարբառը» ուսումնասիրության մեջ:

¹⁶ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. 2, Երևան, 1932, էջ 230—232:

¹⁷ Այդ մասին տե՛ս մեր «Գորիսի բարբառը», էջ 49:

¹⁸ Տե՛ս Հր. Աճառյան, Արմատական բառարան, հատ. 2, էջ 231:

¹⁹ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն գավառական բառարան, էջ 1012:

²⁰ Տե՛ս Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, վաղարշապատ, 1912, էջ 617:

²¹ Տե՛ս Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հատ. IV, Երևան, 1945, էջ 371:

²² Տե՛ս Ս. Ամատունի, նշվ. աշխ., էջ 328:

նաև, որ Ղարաբաղի և Գորիսի բարբառներում ջվալի (տոպրակի) երկու կո-
ւերի օղակները, ճիշտ է, ավելի շատ անվանվում են տանկ||տանգ բառով,
բայց ոչ սակավ և կամ առանձին խոսվածքներում ընդհանրապես դրա փո-
խարեն գործածվում է կանթ բառը²³, վերջինիս նշանակությունների համար
համտ. «Կանթ. գ. Կոթ»²⁴, «Կանթ Երև. Վն. Տ. ամանին կոթը. խուլփ: 2. (ծծկ.)
/իզմ. Վն. Կին, կնիկ»²⁵, «Կանթ» կոթ (որևէ ամանի)»²⁶, «Կանթ Ար. Ախլցխ.
Մշ. Անոթների ունկ, բունատեղ»²⁷, «Կանթ գ. 1. Օղակաձև կամ կես բոլորակ
կցվածք ամանների և այլ իրերի, որից բռնում են՝ վերցնելու համար. բունա-
տեղ, ունկ: 2. Փոքրիկ մետաղե օղակ, որ կպցնում են արծաթե կամ ոսկե
դրամին, որից թել անցկացնելով՝ կանայք կրում էին այդ դրամներն իբրև
զարդ...»²⁸ և այլն:

Արդ՝ հարց է ծագում. տանկ||տանգ և կանթ բառերը սոսկ իմաստապես
են համընկնում իրար, թե՞ հնչյունական կառուցվածքի տեսակետից ևս ընդ-
հանրական կապ գոյություն ունի նրանց միջև: Ոչադիր զննելով զուգադրվող
ձևերը, չի կարելի չնկատել, որ դրանք իրար համընկնում են նաև հնչյունա-
բանորեն. կանթ և տանկ||տանգ բառերը կամ դրանցից մեկն ու մեկը ունեցու-
թյուններում կան դեպքեր, երբ և ձայնորդին հաջորդող ք-ն դառնում է
տ: Կանթ բառը հենց, օրինակ, Մշո բարբառում և Սևանի շրջանի Ծովագյու-
ղի խոսվածքում գործածվում է կանտ ձևով²⁹: Այստեղից իսկ հետևում է, որ
որոշ բարբառներում ք>տ հնչյունափոխությամբ կանթ-ը իրոք դարձել է

կանտ, որն էլ իր հերթին ենթարկվել է կ տ դրափոխության կամ շրջման և
առաջ բերել տանկ, այլև տանգ (և ձայնորդին կ-ի հաջորդելու պատճառով)
ձևերը. համտ. փետուր>թեփուր||թէփուտ, պուտ>տօպ (բայց նաև պօտ),
կնճիթ>*կընթին>*կընտին>*կընտիչ>կընդիչ³⁰:

Այսպիսով, սովորական ու պարզ դրափոխության օրենքով կանթ բա-
ռից ծագել-առաջ է եկել տանկ||տանգ բառը, որը իմաստի նեղացմամբ սկսել է
գործածվել միայն «ջվալի (տոպրակի) կողերի երկու օղակները» նշանակու-
թյամբ³¹: Անշուշտ, նույն այդ բառն էլ Ղազարիում ստացել է ավելի նեղ՝ «Քթին
տակը գտնված և երկու ծակերը բաժանող կոճիկը?», «Երկու քթածակերն
իրարից բաժանող կոճիկի ներքևի մասը(?)» իմաստը, որ առաջ է եկել նմա-
նողություն, այսինքն՝ քթածակերը ջվալի կողերի երկու օղակներին նմանեց-
նելու հիման վրա³²: Այսպիսով, եթե հիմնավոր է ճանաչվում կանթ>կանտ>

²³ Նման գործածությունները չեն բացառվում, անշուշտ, նաև այլ բարբառներում:

²⁴ Տե՛ս «Առձևոն բառարան Հայկազեան լեզուի», Վենետիկ, 1865, էջ 420:

²⁵ Տե՛ս Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն գավառական բառարան, էջ 547:

²⁶ Տե՛ս Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն արմատական բառարան, էջ 514:

²⁷ Տե՛ս Ս. Ա մ ա տ ու ն ի, նշվ. աշխ., էջ 328:

²⁸ Տե՛ս Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հատ. II, էջ 383:

²⁹ Առաջինի համար տե՛ս Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հատ. Բ, էջ 314, իսկ երկրորդի համար՝ Բ. Բ ա դր ա մ յ ա ն, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Երևան, 1972, էջ 208:

³⁰ Այդ մասին տե՛ս, օրինակ, մեր «Գորիսի բարբառը», էջ 115—116:

³¹ Մեղրու, Կարճևանի ևն բարբառներում տանգ բառը ունի նաև «համետի վրա կարված օղակ» նշանակությունը (տե՛ս, օրինակ, Հ. Մ ուր ա դ յ ա ն, Կարճևանի բարբառը, Երևան, 1960, էջ 230):

³² Պրոֆ. Գ. Զահուկյանը հիշյալ նշանակությամբ գործածվող տանգ բառը «հայերենի ընդ-հանուր օրինաչափություններից» շեղվող և «օտար ենթաշերտ կամ որևէ հնդեվրոպական լեզվից

տանկ||տանգ հնչյունական փոփոխությունը³³, ապա տանկ||տանգ-ի նախաձոր ու սկզբնական ձևը իրոք կանք բառն է, որը զրավոր ավանդված է ուշ շրջանից (XIII դար) և հայերենի դեռևս չստուգաբանված արմատներից է³⁴:

24. ՏՈՊ (<ՏՈՊ)

Գորիսի և Ղարաբաղի բարբառներում պոլտ «կակաշ, հարսնուկ, ծափկոտրուկ», «արտերի մեջ բուսնող, մեջը գնդաձև կարմիր ծաղիկ ունեցող բույս» և պոլտ «կաթիլ, փոքր կաթիլ», «փոքր ինչ, մի քիչ» բառերը³⁵ գործածվում են շրջված առաջ (<տուպ<պուտ) ձևով³⁶: Մի երկու օրինակ. Ըրտէ-րումը տօպը ըստարի շատ ա (=Արտերում պուտը այս տարի շատ է), Խօխան

հին փոխառություն» Լեթադրող արմատների շարքում ներկայացրել է այսպես. «տանգ թրանսկրիբեր բաժանող կոճիկ» (Ղրբ.) — հուն. *τενταγος* «ծանծաղուտ», լատ. *tigas* (**tingas*) «խոր տնդ՝ երկու ոչ խոր տեղերի միջև» (հ.-հ. *tenagos*, *tenagos* չքրի հատակ», տե՛ս նրա «Հայ բարբառագիտության ներածություն», Երևան, 1972, էջ 321):

33 Կանք բառը կարող էր տանկ||տանգ դառնալ նաև կանք>քանկ>տանկ||տանգ հնչյունափոխական ընթացքով:

34 Իր իմաստային ու հնչյունական կողմերով կանք բառը որոշակիորեն համընկնում է հին ֆրանսերենի *cant* (հմմտ. լատ. *canthus* «1. Երկաթյա օղակ, железный обод. 2. Անիվ, ակ, колесо», տե՛ս «Латинско-русский словарь», под общей редакцией проф. С. И. Соболевского, М., 1949, էջ 136) բառին. որը և ամենայն հավանականությամբ միջին դարերում փոխանցվել է հայերենին: Հր. Աճառյանի հաստատմամբ հին ֆրանսերենից փոխառված 86 բառերից 4-ը առանձին կյանքին է վերաբերում: «Առանձին տնտեսության բաժինը — գրում է նա, — գիտե երեք տեսակ ամանեղենի անուն, որոնք են հանապ «բաժակ», մուրաղ «սանդ», պաղին «կոնք». սրանցից դուրս կա մուր «ամանների բերանը զոցելու հատուկ մեխ կամ շաղախ. Լսէ»: Ամանեղենի փոխադրությունը երկրից երկիր ծանոթ երևույթ է. նորամույժ առարկայի հետ զալիս է նաև իր անունը» (տե՛ս «Հայոց լեզվի պատմություն», 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 306):

Կանք-ը իբրև ամանի մասի անուն, պատկանում է, անշուշտ, Հր. Աճառյանի հիշատակած բառերի: Բովին և հայերենին է անցել Եվրոպայից փոխադրված ինչ-որ ամանեղենի կամ զուցե կանխավոր արծաթե, ոսկե դրամի հետ, տարածում գտնելով հատկապես այն բարբառներում (Վանի, Մշո, Սալմաստի, Ալաշկերտի, Արարատյան, Ղարաբաղի ևն), որտեղ մուտք են գործել այդ իրերը: Հատկանշական է, որ բոլոր դեպքերում կանք-ը «ամանների և այլ իրերի օղակաձև կամ կես բոլորակ կցվածքի», «փոքրիկ մետաղե օղակի» իմաստներն է արտահայտել, հիմք ծառայելով կանքանի, կանքավոր (= կանք ունեցող), կանքել (= «1. Պղնձեղեն անոթներին կանք ձգել, դնել»: 2. Դրամներին ունկ, կանք դնել իբրև զարդ գործածելու համար: 3. Կանքի ձևով ձեռքերը կողքին դնել») բառերի կազմության համար:

Կանք (<*cant*) բառը հին ֆրանսերենից, սակայն, ոչ միայն հայերենին, այլև, ինչպես ստուգաբան Մ. Ֆասմերն է գտնում, անցել է գերմաներենին, լեհերենին և վերջինիցս էլ հավանաբար նաև ռուսերենին. «*Кант* „шов, отделка, обшивка“. Вероятно, через польск. *kant* из нем. *Kante*, которое происходит из ст.-франц. *cant*, лат. *canthus*» (տե՛ս նրա «Этимологический словарь русского языка», т. II, М., 1967, էջ 181):

Դա այդպես լինելու դեպքում, հասկանալի է, ծագումով նույնանում են հայերեն կանք և ռուսերեն *КАНТ* («եզրաքուղ», «եզրաշրջանակ») բառերը, որոնց իմաստների միջև եղած կապը նույնպես ակնհայտ է:

35 Դրանց նշանակությունների համար տե՛ս «Առձևոն բառարան հայկադեան լեզուի», էջ 700: Ս. Ամատունի, նշվ. աշխ., էջ 566: Հր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, էջ 926: Ն ու յ ն ի՝ Հայերեն արմատական բառարան, հատ. Ե, էջ 1129—1132: Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հատ. IV, էջ 119, 438: Տ. Ն ա վ ա ս ար դ յ ա ն, Բառգիրք Արարատեան բարբառի, Տիփլիս, 1903, էջ 99 և այլն:

36 Այլ մասին տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, էջ 926: Ն ու յ ն ի՝ Հայերեն արմատական բառարան, հատ. Ե, էջ 1129—1132, այլև մեր «Գորիսի բարբառ», էջ 485:

մընչանք տօպ ա կէրալ, վէր փօրը ցավում ա (= Երեխան այնքան պուտ է կերել, որ փօրը ցավում է). Մանդը կըտրալ ա, ամմա մըն տօպ արին չի կ'ամ (= Մատը կտրել է, բայց մի պուտ արյուն չի դալիս), «Ըմըռնէս մին տօպ թօռալ յէկալ չի (= Այս ամռանը մի պուտ անձրև էլ չի եկել)...

Սկզբնաղբյուր բառարաններում այդ բառերը դիտվում են իբրև իրարից անկախ, համահունչ կամ նույնանուն բառեր և ներկայացվում, բնականաբար, առանձին ղլխաբառերով: Բայց նախ հենց այն հանգամանքը, որ ինչպես պուտ I և պուտ II համանունները, այնպես էլ դրանց շրջված ձևերը հիմնականում գործածության նույն վայրերն են ընդգրկում, ըստ էության ազդանշում է նրանց միջև եղած ծագումնաբանական կապն ու ընդհանրությունը: Եվ իրո՞ք. բնավ պատահական չպետք է համարել, որ նրանք հավասարապես գործ ենածվում Երևանի (պուտ), Քբիլիսիի (պուտ), Պոլսի (բուդ), Ալաշկերտի (բուդ), Կարնո (պուդ), Վանի (պուտ), Ղարաբաղի (տօպ), Գորիսի (տօպ) և այլ բարբառներում ու խոսվածքներում³⁷, որոնցում էլ նրանցից մեկը եթե իսկապես՝ պուտ բույսը, ապա մյուսը «կաթիլ, մի կաթիլ», «փոքր ինչ, մի քիչ» նշանակություններն է արտահայտում:

Արդ՝ դրանցից ո՞րը կարող էր իմաստապես ճյուղավորվել և հիմք դառնալ մի նոր նշանակության ստեղծման համար: Հայտնի է, որ ծաղիկ (կակաչ, ծափկոտրուկ, հարսնուկ) նշանակող պուտ-ը մի այնպիսի բույս է, որ քաղելու ժամանակ կտրված մասից աճանման շիթ կամ կաթիլ է դուրս գալիս՝ արյան շիթի՝ կաթիլի նման դրոշմելով, ասենք, քաղողի ձեռք(եր)ին: Միանգամայն տրամաբանական է, որ այդօրինակ նմանողության հիմքի վրա բույս նշանակող պուտ բառից կարող էր առաջ գալ և, անշուշտ, առաջ է եկել «կաթիլ, մի կաթիլ» իմաստը, որ բառաձևի ինչպես ուղիղ, այնպես էլ շրջված ձևով առաջին անգամ արձանագրվել է Երեմիա Մեղրեցու բառարանում շիթ բառի բացատրության մեջ. «Շիթ—կաթիլ, պուտ պուտ, կաթ, կամ տուպ, կամ ցայթ»³⁸: Բայց բույս նշանակող պուտ բառից առաջ եկած «կաթիլ, մի կաթիլ» իմաստով նրա նշանակության փոփոխությունը կամ զարգացումը ամենևին էլ կանգ չի առել. ինչպես մեծանուն հայագետ-լեզվաբան Հր. Աճառյանն է պարզ ու գեղեցիկ բացատրել, իբրև փոքրության նշան «կաթիլ» գաղափարից ծնունդ են առել նաև «նիշ պիսակի, մարմնի վրա խալ», «մի քիչ, մի փոքր կտոր» իմաստները, որ գործածական ենք տեսնում այլևայլ բարբառներում: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ թե՛ բույս («կակաչ, ծափկոտրուկ, հարսնուկ») և թե՛ մյուս նշանակությունների համար պուտ բառը գործածվում է նաև կրկնությամբ. հմմտ. պուտ պուտ||տօպ տօպ («կակաչի կամ խաշխաշի մի տեսակը») և պուտ պուտ||տօպ տօպ («կաթիլ կաթիլ»)³⁹, պուտուտուրիկ

37 Դրանց մեծ մասի համար տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն զավառական բառարան, էջ 926: Նույնի՝ Հայերեն արմատական բառարան, էջ 1129—1132: Ս. Ամատունի, Հայոց բառուբան, էջ 566:

38 Տե՛ս Բաղդիրք հայոց, էջ 247 և Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ե, ուր հեղինակը գրում է. «ՊՈԻՏ, Կաթիլ». հետին հայերեն բառ, որ գտնում եմ գործածված Առաք. պտմ. էջ 457. հիշում է նաև Բառ. Երևմ. էջ 246՝ Շիթ բառի բացատրության մեջ: Կենդանի է զավառականներում պուտ ձևով, որի շրջվածն էլ կա տուպ ձևով. այս ձևն էլ է հիշում Բառ. Երևմ. անդ» (էջ 1131):

39 Հմմտ. տուտ—կաթիլ: Պուտ պուտ—կաթիլ կաթիլ: Մինն պուտ պուտ, մինն փութ փութ (Տ. Նավասարդյան, Բաղդիրք Արարատյան բարբառի, էջ 99):

(«սլուտեր ունեցող, խատուտիկ») և տպտպիկ, տպտպորիկ («կիտվածալոր՝ կետ-կետ զարդեր ունեցող») և այլն:

Այսպիսով, բերված փաստերը եթե մի կողմից բույս նշանակող պոլտ բառի կրած իմաստափոխությունների ընթացքն են ուրվագծում, ապա մյուս կողմից հաստատում ու ակներև են դարձնում նրանից «կաթիլ, մի կաթիլ», «կետ», «մի քիչ, մի փոքր» իմաստներն արտահայտող պոլտ (>պօտ> տօպ) բառի ծագումը:

ИСТОЛКОВАНИЯ ДИАЛЕКТНЫХ СЛОВ

Доктор филол. наук А. С. МАРКАРЯН

(Резюме)

В статье рассматривается происхождение следующих армянских диалектных слов: գլուխկոնձի|| գլուխկոնձի («кувырком, кубарем», употребляется в основном с глаголом տալ «дать» — գլուխկոնձի|| գլուխկոնձի տալ «кувыркаться»), րադսել («выворачивать лотком бобовые»), սեն («пустой, суетный, холостой»), տանկ|| տանգ («ушко, черенок»), տօպ (1 «капля», 2 «малый, маловат»). На основе семантико-фонетического и историко-филологического анализа устанавливается, что эти слова восходят соответственно к формам գլուխկործի (= գլուխ «голова» + կործ «поворот» + ի — окончание склонения), րադս (турец. слово tars «навыорот») + ել (частица инфинитива), սին («пустой, суетный, холостой»), կանր («ушко», ср. ст.-франц. canl, лат. canthus, русск. кант) и պոլտ («мак, анемона»).